# Համաձայնագիր

Թբիլիսիի քաղաքապետարանի թիվ 6 գեղարվեստի և Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի գեղարվեստի դպրոցների, էթնոմշակութային կրթության միջազգային կենտրոն միջև

Թբիլիսի քաղաքապետարանի թիվ 6 գեղարվեստի դպրոցը և Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի գեղարվեստի դպրոցը (այսուհետ դպրոցներ), հաստատելով իրենց հավատարմությունը վրաց և հայ ժողովուրդների դարավոր բարեկամությանը՝

- Հայաստանի և Վրաստանի հանրապետությունների և ազատ հասարակությունների արդի համագործակցության զարգացմանը դպրոցների մասնակցության,
- 2011թ. Թբիլիսիում Թբիլիսիի և Երևանի քաղաքապետերի ձեռք բերած պայմանավորվածությունների իրագործմանը մասնակցելու,
- դպրոցների սաների և աշխատողների՝ միմյանց ավելի լավ ճանաչելու, իրենց տաղանդը համատեղ ստեղծական աշխատանքում իրականացնելու համար

պայմանավորվում են՝

- հաստատել բարեկամական և գործնական կապեր դպրոցների, սաների և աշխատողների մակարդակով՝ մշտապես փոխանակելով աշխատանքային տեղեկատվություն.
- կազմակերպել փոխայցելություններ, համատեղ ստեղծագործական հավաքներ, ճամբարներ, ցուցահանդեսներ.
- կթանել դպրոցների սաների և ուսուցիչների միջև միջանձնային համագործակցության հաստատմանը:

2012 թվականին՝

- Թբիլիսիի գեղարվեստի դպրոցը՝ որպես գործընկեր, կմասնակցի «Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի» կողմից կազմակերպվող Հանրակրթական դիջիթեքին, մեդիաօլիմպիադաներին, վրացերենի պետական տոնին, Էրեբունի-Երևան տոնակատարությանը և այլ միջոցառումների:
- «Մխիթար Սեբաստացի կրթահամալիրի» գեղարվեստի դպրոցը կմասնակցի Թբիլիսի քաղաքի տոնին, Թբիլիսիում հանդես կգա սաների և ուսուցիչների հրապարակային հաշվետվությամբ: Կմասնակցի Թբիլիսիի գեղարվեստի դպրոցի ամառային ճամբարի աշխատանքներին և դպրոցի այլ միջոցառումներին:

Սույն համաձայնագիրը կնքված է քաղաք Թբիլիսիում, վրացերեն և հայերեն հավասարազոր երկուական օրինակներից:

Թբիլիսիի N6 գեղարվեստի դպրոց
Հասցե՝ ք. Թբիլիսի,
Հեռախոս՝
Էլ. հասցե՝

Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր
Հասցե՝ ք. Երևան, Բաբաջանյան 25,
Հեռախոս՝ (+374 10) 741112

Տնօրեն՝

էլ․ հասցե՝ info@mskh.am

Տնօրեն՝

Աշոտ Բլեյան

Էթնոմշակութային կրթության միջազգային կենտրոն

Նախագահ՝

Գիորգի Կվաբզիրիձե